

ՀԵՐՀԵՐ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Անդրանիկ Աբրահամյան

Հեռախոս՝ +374.94.010252

Բնակչություն՝ 714

Հերիեր գյուղը գտնվում է Արփա գետի համանուն վտակի միջին հոսանքում, գետակի աջ ափին, Վայոց սար լեռան հարավային լանջին: Հեռավորությունը Երևան-Գորիս ավտոմայրուղուց 12 կմ է, Վայք քաղաքից դիրքով՝ հյուսիս-արևելք, Ջերմուկ քաղաքից՝ արևմուտք: Ծովի մակերևույթից համայնքի բարձրությունը 1500-1750 մ է, գյուղամիջյան հրապարակում՝ 1650մ: Գյուղական համայնքին պատկանող մերձակա լեռնագագաթների բարձրությունն անցնում է 2600 մետրից: Կլիման ցամաքային է, ամռանը՝ 25-280C, առավելագույնը՝ 370C, ձմռանը՝ -7-ից -80C, նվազագույնը՝ -200C: Տեղումները սակավ են, հիմնականում՝ գարնանը: Ամառները շոգ են, սակավանձրև, ձմեռները՝ ձյունառատ:

Գյուղի տարածքը սահմանային է, հրաբխային բարձրավանդակի և ծայքաբեկորավոր լեռների տարածվածության առումով, այդ պատճառով հողի տիպերը բազմազան են:

Վայոց սար հանգած հրաբխային կոնի հարավային լանջերը հիմնականում ավազային են, գյուղի տարածքում շատ են ավազահանքերը: Ուսումնասիրված ապարատեսակներից տարածված են բազալտը, գրանիտը, պեռլիտը, մարմարը: Առկա են օբսիդիանի (վանակատ) պաշարներ: Հողի վերին շերտերը բերրի են, սակայն դժվարմշակելի են ապառաժոտ տեղանքի պատճառով: Գյուղի հարավային և արևելյան մասերում առկա են սևահողեր և կարմրահողեր, մեծ տարածվածություն ունեն լեռնաշագանակագույն հողերը: Ձգված տեղադիրքի պատճառով հարավից հյուսիս գոյանում են լանդշաֆտների տարբեր տիպեր. գերակշռում են անտառային և լեռնատափաստանային լանդշաֆտները:

Բուսական աշխարհը հարուստ է: Հանդիպում են բազմաթիվ էնդեմիկ բուսատեսակներ՝ Հայկական լեռնաշխարհի համապատասխան բարձրության գրեթե բոլոր բուսատեսակները: Գյուղի տարածքն աչքի է ընկնում դեղաբույսերի, բուժիչ խոտաբույսերի հարուստ պաշարով: Կենդանատեսակները ևս բազմազան են: Հերիերի տարածքում և նախախորհրդային, և խորհրդային տարիներին, և ներկայումս մշտապես գոյություն են ունեցել հատուկ պահպանվող տարածքներ: Վայրի կենդանատեսակներից հանդիպում են գայլ, աղվես, արջ, վարազ, հանդիպում են նաև օձերի ու մողեսների բազմաթիվ տեսակներ: Թռչուններից տարածված են լորը, կաքավը, ագռավը, կաչաղակը, ճնճղուկը, չվող թռչուններից ամենատարածվածը սարյակն է: Հերիեր համայնքի աշխարհագրական տարածքում են գտնվում բնության հետևյալ հուշարձաններն ու պահպանվող տարածքներն ու արգելավայրերը .

- Վայոց սար (Դալիկ թափա) հրաբխային կոնը, բարձրությունը՝ 2581 մ, խառնարանի խորությունը՝ 130 մ,
- <<Հերիեր>> ջրվեժը - գյուղից 2,5 կմ հյուսիս,
- <<Սուրբ Գևորգ>> աղբյուրները – գյուղից հարավ,
- <<Հերիերի նոսր անտառներ>> արգելավայրը (հանդիսանում է հատուկ պահպանվող տարածք):

Պատմական տեղեկությունները Հերիեր գյուղի վերաբերյալ հարուստ չեն: Գյուղի տարածքում առկա են մի շարք բնակավայրեր, որոնց ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գյուղը բնակեցված է եղել շատ վաղուց: Դա է պատճառը, որ բազմաթիվ են հանրապետական նշանակության պատմամշակութային հուշարձանները: Վաղ միջնադարում այն արդեն կարևոր նշանակություն ունեցող բնակավայր էր:

Պահպանվել են գյուղի Հերիեր, Երերն, Երերան անվանումները: Զաքարյանների իշխանապետության շրջանում (12-13-րդ դարեր) այն եղել է Օրբելյանների վասալ Շահունեցիների նստավայրը: Հերիերում է ծնվել միջնադարի խոշոր մտածող, րաբունապետ Գրիգոր Տաթևացին (աշխարհիկ անունը՝ Խուլուշահ):

Գյուղից հյուսիս-արևելք գտնվող Սուրբ Սիոն մենաստանը (վանական համալիր՝ կառուցված 11-13-րդ դարերում) հռչակված է եղել իր կրթական գործունեությամբ: Այդ մենաստանի տարածքում կան միջնադարյան ճարտարապետության ու խաչքարագործության եզակի նմուշներ: Գյուղի արևելյան մասում են գտնվում Կապույտ բերդ կոչվող ամրոցը և Սբ. Գևորգ մատուռը: Վերջինիս տարածքի հողը մինչև հիմա էլ հայտնի է մաշկային հիվանդություններ (էկզեմա) բուժելու հատկությամբ: Գյուղի ողջ տարածքում բազմաթիվ են մատուռները, խաչքարերը, միջնադարյան կառույցների մնացորդները: Ավելի ուշ շրջանում՝ Շահ-Աբասի արշավանքների ժամանակ գյուղը ենթարկվել է տեղահանության, սակայն գյուղացիների մի մասը փրկվել է բռնագաղթից՝ ապաստանելով գյուղից 3 կմ հյուսիս գտնվող քարանձավում, որը մինչև հիմա կոչվում է <<Սյուրգուն>> (թյուրք լեզուներում՝ աքսոր, գաղթ):

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո գյուղ են ներգաղթել հայեր Պարսկահայաստանի Խոյի ու Սալմաստի գավառներից: Այդ պատճառով գյուղի բնակչության մեջ տարածված է եղել երեք բարբառ: Խոսվածքում առավելություն ունի <<Կըլա>> ճյուղը, որը Արարատյան բարբառի ենթաճյուղ է: Նախախորհրդային տարիներին գյուղում բնակվել են նաև թուրք-ազերիներ, և ազգամիջյան բազում բախումներ են հայտնի: 1940-ական թվականներին նրանց մեծ մասը արտագաղթել է: 1990-ական թվականների սկզբին ընդամենը մեկ ընտանիք է մնացել, որի հեռանալուց հետո Հերիերի բնակչությունը միատարր է: